ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/247

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13699-2021 գրությամբ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 18.08.2021թ. հիման վրա, 26.08.2021թ. թիվ 26/26-1/13699-2021 գրությամբ նախաձեռնել է «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/247 ընթացակարգի շրջանակներում 01.09.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.08.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի միջև 19.02.2021թ. կնքված N ՀՀԱՄ-ԱՐԱԳԱԾԱՎԱՆ-ԹԻՎ-2-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -21/01 գնման պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջները՝ «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 2021թ. օգոստոսի 13-ին միակողմանի լուծել է պայմանագիրը և պայմանագրին կից կնքված համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 16.08.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/247 ընթացակարգի շրջանակներում 01.09.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/247 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/247 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի միջև 19.02.2021թ. կնքվել է թիվ «ՀՀԱՄ-ԱՐԱԳԱԾԱՎԱՆ-ԹԻՎ-2-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -21/01» ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մարզադահլիճի հատակի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայնագրի կնքման օրվանից 45 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 19.02.2021թ. կնքվել է N_01 համաձայնագիր-պայմանագիր-փոփոխությունը, որը համաձայն 1.4 ենթակետի ուժի մեջ է մտել 22.02.2021թ.:

3. «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի միջև 19.02.2021թ. կնքված N ՀՀԱՄ-ԱՐԱԳԱԾԱՎԱՆ-ԹԻՎ-2-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -21/01 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և 08.04.2021թ. Պայմանագրին կից կնքված համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն՝ Համաձայնագրի

կնքման օրվանից 75 օրացուցային օրվա ընթացքում «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի կողմից չեն իրականացվել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Մարզադահլիճի հատակի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ «Ինքնահարթեցվող շերտի իրականացում» և «Հատակի իրականացում վինիլ տեղակի ծածկույթով t=4մմ հաստությամբ, սոսնձի հետ միասին» աշխատանքները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջները՝ «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 13.08.2021թ. դրությամբ միակողմանի՝ Պայմանագրի և Համաձայնագրի չկատարված աշխատանքների մասով, մասնակի լուծել է Պայմանագիրը: (...)»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 16.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13699-2021 գրությունը, «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 18.08.2021թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ,

4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի միջև 19.02.2021թ. կնքվել է թիվ «ՀՀԱՄ-ԱՐԱԳԱԾԱՎԱՆ-ԹԻՎ-2-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -21/01» ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մարզադահլիճի հատակի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայնագրի կնքման օրվանից 45 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 19.02.2021թ. կնքվել է N_01 համաձայնագիր-պայմանագիր-փոփոխությունը, որը համաձայն 1.4 ենթակետի ուժի մեջ է մտել 22.02.2021թ.:

«Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի միջև 19.02.2021թ. կնքված N ՀՀԱՄ-ԱՐԱԳԱԾԱՎԱՆ-ԹԻՎ-2-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -21/01 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և 08.04.2021թ. Պայմանագրին կից կնքված համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն՝ Համաձայնագրի կնքման օրվանից 75 օրացուցային օրվա ընթացքում «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի կողմից չեն իրականացվել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Մարզադահլիճի հատակի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ «Ինքնահարթեցվող շերտի իրականացում» և «Հատակի իրականացում վինիլ տեղակի ծածկույթով t=4մմ հաստությամբ, սոսնձի հետ միասին» աշխատանքները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջները՝ «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 13.08.2021թ. դրությամբ միակողմանի՝ Պայմանագրի և Համաձայնագրի չկատարված աշխատանքների մասով, մասնակի լուծել է Պայմանագիրը: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 16.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին</u>***

<u>մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

<u>բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),</u>

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ն խախտել է իր և «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 19.02.2021թ. կնքված Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13699-2021 գրությամբ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**